

**Տեղեկատվություն ՀՀ Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի՝ ապրիլ ամսվա
ընթացքում մարզի համայնքներ կատարած այցելությունների մասին**

- Ապրիլի 1-ին մարզպետն այցելել է Ծաղկահովիտ համայնք, որտեղ քննարկվել են խմելու ջրագծի հետ կապված հարցեր:
- Ապրիլի 1-ին մարզպետն այցելել է Ծաղկաշեն համայնք, որտեղ մասնակցել է մեխանիզատորների եւ մանկավարժների գերդաստաններին նվիրված միջոցառմանը:
- Ապրիլի 2-ին մարզպետն այցելել է Ն. Բազմաբերդ համայնք, որտեղ հանդիպում է ունեցել համայնքի ղեկավարության եւ բնակիչների հետ:
- Ապրիլի 4-ին ՀՀ նախագահը եւ մարզպետը այցելել են Բյուրական, որտեղ մասնակցել են „Հեռանկարներ,“ փառատոնի ակադեմիայի բացմանը:
- Ապրիլի 7-ին մարզպետն այցելել է Սասունիկ համայնք, որտեղ ծանոթացել է կառուցվող մանկամարտեզի շինարարական աշխատանքներին:
- Ապրիլի 7-ին մարզպետն այցելել է Թաթուլ գյուղում բնակվող, Հայոց ցեղասպանությունը վերապրած Գույնա Նազարեթի Մարկոսյանին: ՀՀ Նախագահի կողմից Գույնա Մարկոսյանին հանձնվել են նվերներ՝ Հայոց ցեղասպանության 100-ամյակի հուշադրամ, 1 մլն. դրամի չափով աջակցություն եւ գարնանային ծաղիկներ:
- Ապրիլի 8-ին մարզպետը եւ ՏԿՆԱԻ ու գյուղատնտեսության նախարարները այցելել են Արտաշավան, որտեղ կայացել է հակակարկտային կայանների հետ կապված հարցեր:
- Ապրիլի 9-ին մարզպետն այցելել է Թալին քաղաքի գեղարվեստի դպրոց եւ ծանոթացել դպրոցում կատարված վերանորոգման աշխատանքներին:
- Ապրիլի 11-ին մարզպետն այցելել է Ավան համայնք, որտեղ մասնակցել է Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված խաչի բացման արարողությանը:
- Ապրիլի 15-ին մարզպետը Հացաշեն եւ Սորիկ համայնքներում հանդիպումներ է ունեցել բնակչության հետ: Աշխատանքային քննարկումներ է ունեցել նաեւ համայնքների ղեկավարության հետ:

- Ապրիլի 16-ին մարզպետը Կարբի եւ Արագած համայնքում քննարկումներ է ունեցել Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումների ծրագրի շուրջ:
- Ապրիլի 17-ին մարզպետը Արագած համայնքում մասնակցել է Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառմանը:
- Ապրիլի 20-ին մարզպետը Կաթնաղբյուր համայնքում մասնակցել է Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված հուշակոթողի բացման արարողությանը:
- Ապրիլի 21-ին մարզպետը Թաթուլ համայնքում մասնակցել է ՀՀ Ազգային հերոս Թաթուլ Կրպեյանի ծննդյան 50-ամյակին նվիրված միջոցառմանը:
- Ապրիլի 22-ին մարզպետը Ուշի համայնքի դպրոցում մասնակցել է Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառմանը:
- Ապրիլի 22, ժամը մարզպետը մասնակցել է Թալին քաղաքում կազմակերպված Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված արարողությանը:
- Ապրիլի 23-ին մարզպետը Վերին Բազմաբերդ համայնքում մասնակցել է Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված խաչքարի բացման արարողությանը:
- Ապրիլի 24-ին մարզպետը Ներքին Բազմաբերդ համայնքում մասնակցել է Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված խաչքարի բացման արարողությանը:
- Ապրիլի 28-ին մարզպետը Վարդենուտ համայնքում մասնակցել է սպանդանոցի բացման արարողությանը:
- Ապրիլի 29-ին մարզպետն այցելել է Մուղնի եւ մասնակցել է 2015թ. մարտի 19-ին դիվերսիայի հետեւանքով զոհված ՊԲ զինծառայող Էդվարդ Հայրապետյանի քառասունքի եւ շիրմաքարի բացման արարողությանը: